

**12.**

## **ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ SOCIOLOGY AND POLITICS СОЦИОЛОГИЧЕСКИЕ И ПОЛИТИЧЕСКИЕ НАУКИ**

**Ա. Զ. ԹՈՅՆԵԻՆ ՀԱՍՏԱԿԱԿԱՆ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ  
ԵՎ ՄԻՋՅԱՔԱՔՐԹԱՎԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

**Ա. Ա. ՔԱԼԱՆՉՅԱՆ**

*Քաղաքական գիտությունների թեկնածու,  
ՀՀ սփյուռքի նախարարության գլխավոր մասնագետ*

Անցյալ դարի երկրորդ կեսին ինտենսիվ վերելք ապրող համաշխարհայնացման քաղաքականության մարտավարության տեսական հիմնավորումների որոնումներում արևանտյան հասարակական, հասարակական-փիլիսոփայական և քաղաքագիտական մտքի ներկայացուցիչներից շատերի ջանքերով հրապարակ իջան «ներդաշնակ զարգացող աշխարհակարգի» նոդելները: Դրանց տեսական փաստարկնան որոնումները կյանքի կոչեցին նաև քաղաքագիտական այնպիսի հայեցակարգեր, որոնցում փորձ էր կատարվում մերժել հասարակության վերջնարաց զարգացումը, այլ կերպ ասած՝ սոցիումների տնտեսական, քաղաքական, նյութական ու հոգևոր գործոնների դերը, որոնց փոխարեն առաջին պլան նոյնական էին համարվում տեղական (լոկալ) «քաղաքակրթությունների գործակցական հարաբերությունները»: Դասարակական, տնտեսական և քաղաքական ցնցումներին, ինչպես նաև զաղափարախոսական հակամարտությանը և պայքարին փոխարինելու եկած «քաղաքակրթությունների հարաբերության» նոդելը ոչ միայն համարվեց «առավելագույն մարդասիրություն», այլև նշտված էր ուրվագծել «անհակասական հասարակության պատկեր» և դրանով իսկ փորձ էր կատարվում արդարացնել համաշխարհայնացման հոգևոր հիմք համարվող «արևանտյան քաղաքակրթական ունիվերսալիզմն ու էքսպանսիան»: Ինչպես հասարակական-քաղաքական մտքի այլ ոլորտներում, այստեղ ևս պատմականութեն դրսնորվել են արմատական և չափավոր տեսակետներ: Այս վերջիններին խնդիր ներկայացուցիչ է նաև դարաշրջանի անգլիացի տեսաբան Ա. Զ. Թոյնբին:

Բնագրային վերլուծությունը ցույց է տալիս, որ անդրադառնալով հասարակական առաջընթացի և հասարակության զարգացման հիմնահարցերի վերլուծությանը, Ա. Թոյնբին ելակետային է համարել մեթոդաբանական այն նոտեցումը, թե պատմության նկատմամբ վերլուծական հայացքներն անխուսափելիորեն

բերում են այն հետևության, որ այդ գործընթացն իրականում այլ բան չէ, քան «պատմության փորձիկ հատվածների» միագույնար: Հետևաբար, գտնում է վերլուծաբանը, որպեսզի պատմության նկատմամբ անհատական ընկալումներն ինչ-որ չափով օբյեկտիվ լինեն և իրապես համապատասխանեն իրականությանը, «... դրանք պետք է ներկայացված լինեն ողջ ժավալով, ներառյալ դրանց ակունքները, զարգացումը, հասարակական և անձնական միջավայրի ազդեցությունը»<sup>1</sup>:

Հասարակական առաջընթացի շարժիչ ուժ համարվող «պատմության հատակուրների» արժևորման ընթացքում հեղինակի խորհրդածություններն ամենից առաջ կենտրոնանում են «պատմության դատի առջև կանգնած քաղաքակրթության» ուսումնասիրության վրա: Ինչպես փաստական նյութն է վկայում, Ա. Թոյնբիի համոզված է նաև, որ այդ գործընթացում պետք է առաջնորդվել մերոդաբանական այն մոտեցմամբ, ըստ որի «հասարակական միջավայրին անհրաժեշտ է քննարար և համակողմանի անդրադառնալ բազում տեսանկյուններից»: Նկատենք նաև, որ իհմնահարցի լուծման որոնումներում անգիտացի տեսաբանն այդ մոտեցումը ելակետային է համարում քաղաքակրթությունների բնականոն զարգացումը, հավասարապես նաև՝ «քաղաքակրթությունների գործակցությունն ու շրջապատճեցությունները» մեկնաբելու միտունով:

Զգտելով իհմնավորել հասարակական առաջընթացի և զարգացման առաջադրված տեսակետը, վերլուծաբանն առաջին հերթին հավաստում է, որ իր կողմից առաջադրված տեսության կարդինալ իհմնադրույթներից մեկը տեսակետն է այն մասին, «... որ պատմական հետազոտությանը մտահասու դաշտի փոքրագույն տարրը պետք է լինի ամբողջական հասարակարգը, այլ ոչ թե նրա պատահական ու մեկուսացված հատակուրները, ինչպիսիք են ժամանակակից Արևմտաթի ազգային պետությունները կամ պատմության հունա-հռոմեական փուլի քաղաք-պետությունները»<sup>2</sup>: Դժվար չէ համոզվել, որ առաջադրված հայեցակարգի շրջանակներում «ամբողջական հասարակության» մոդել է համարվում ազգային պետություններից, այլ կերպ ասած՝ հասարակության քաղաքական կառուցվածքից և նրա բազմագործոն ատրիբուտներից վեր կանգնած «ոչ պատահական» և գործառնող «պատմական հատակուրները»: Ընդ որում, Ա. Թոյնբիի համոզված պնդում է, որ հասարակական առաջընթացի և զարգացման շարժիչ ուժի որակով հանդես են գալիս շրջապատճեցի ծիրում գտնվող և կրկնվող (ցիկլային) բնույթով օժտված «գործառնող քաղաքակրթությունները», որը փաստվում է վերլուծաբանի հետևյալ տողերով. «Ինձ համար ելակետային մյուս կետն այն էր, որ քաղաքակրթության սահմանմանը համապատասխանող բոլոր հասարակությունների զարգացման պատմությունը որոշակի իմաստով գուգահեռ և ժամանակակից են մեկը մյուսին»<sup>3</sup>: Զբավարարվելով այդ ամենով, Ա.

<sup>1</sup> **Толстов А. Дж.** Цивилизация перед судом истории. СПб., 1995, с. 21.

<sup>2</sup> **Նույն տեղում**, էջ 24:

<sup>3</sup> **Նույն տեղում**: Այս պարագայում, իհմնակի վկայությամբ, ավելի քան ակնհայտ է շպենգլերականության ազդեցությունը: Վկայությունը Ա. Թոյնբիի խոստովանությունն է այն մասին, որ իր կողմից արտահայտած «այդ գլխավոր մտքերը միաժամանակ Շպենգլերի համակարգի անկյունաքարերից էին»: Անուրանալի այդ ազդեցությունը փաստվում է նաև Ա.

Թոյնքին կատարում է նաև հաջորդ քայլը և հավաստում, որ իր կողմից առաջադրված և հասարակության զարգացման հիմքում ընկած «շրջանառվող քաղաքակրթության» հայեցակարգը պարզապես հանդիսանում է «քաղաքակրթության ցիկլային բնույթի մասին» շպենգլերական «անկյունաքարային ուսմունքի» կրկնությունը:

Զգտելով իր վերլուծական մոտեցումը համապատասխանեցնել «Շպենգլերի փայլուն հանճարին», Ա. Թոյնքին վերջինիս ազդեցությամբ պնդում է, որ հակառի մոտեցման դեպքում անխուսափելիորեն պետք է առնչվենք հասարակական կյանքի հակասական ու կոնֆլիկտային իրավիճակների հիմքում ընկած «ազգային ավանդությունների» տարբերությունների ուսումնասիրության հետ: Այս իսկ պատճառով իր կողմից ընտրված վերլուծական մոտեցումն «արդարացնելու» միտումով անգլիացի տեսաբանը հիմնահարցի լուսաբանության գործում մեծապես կարևորում է հատկապես մեթոդի ընտրության հարցը: Նշված համատեքստում միանգամայն հասկանալի է դաշնում նաև, թե ինչու է անգլիացի տեսաբանն այս հարցում առաջնային համարում «քաղաքակրթությունների շրջապատութի» մասին շպենգլերական «բնական օրենքների» կիրառումը: Ըստ Էռլիքան Ա. Թոյնքինի համար աներկրա է, որ սոցիալական և քաղաքական գիտություններում կիրառվող մեթոդները սահմանափակ են, որի պատճառով միանգամայն վստահ պնդում է նաև դրանց հարաբերական բնույթը: Այդ կապակցությամբ նա հավաստիացնում է նաև, որ նշված ոլորտում հավասարապես անհաջողության են նատնվել թե՝ գերմանական ապրիորիզմը, և թե՝ անգլիական էնափրիզմը: Դա է պատճառը նաև, որ Ա. Թոյնքին վստահ պնդում է, թե «հնարավոր այլընտրանքային բացատրությունները հանրաճանաչ փաստերի լույսով ստուգելու դեպքում» վերոնշյալ մեթոդներն իրենց սահմանափակության պատճառով չեն կարող լիովին բավարարել վերլուծական դաշտի առաջադրվող պահանջներին:

Մեթոդաբանական այդ մոտեցումը հիմնավորելու նպատակով Ա. Թոյնքին առաջին հերթին անդրադառնում է հասարակական առաջադիմության և հասարակության զարգացման վերաբերյալ տեսությունների ու հայեցակարգերի բնական վերլուծությանը: Նա մասնավորապես նատնանշում է, որ XIX դարի արևմտյան պատմաբանները «հասարակության նշակութային անհավասարության հիմնահարցը» լուծելու համար առաջադրել են մրցակցող երկու մեթոդաբանական մոտեցումներ, բայց նիստամանակ հավելում է, որ դրանցից ոչ մեկը դեռևս «կարող չի եղել բացել անհայտության դրույքը»: Այդպիսին է, նրա համոգմամբ, հիմնահարցի լուծման «ռասայական տեսությունը», որը generis homo (մարդկային սեռի) Փիզիկական ռասայական տարբերությունները կապում է հոգևոր զարգացման նակարդակային տարբերությունների հետ, իսկ այդ տարբերությունները համարում է «պատմական ուսումնասիրության դաշտ»: Այս մե-

Թոյնքինի հետևյալ տողերով. «Բայց երբ ես Շպենգլերի գրքում սկսեցի որոնել քաղաքակրթությունների ծագման հարցի պատասխանը, տեսա, թե ինչի շուրջ պետք է աշխատեմ, քանի որ իրենց այդ հարցում Շպենգլերը, իմ կարծիքով, զարմանալի դոգմատիկ է և դետերմինիստ: Նրա տեսության համաձայն, քաղաքակրթությունները ծագել, զարգացել և անկում են ապրել կայլուն և որոշակիորեն հաստատված գրաֆիկին համապատասխան, սակայն այդ ամենի մասին ոչ մի բացատրություն չի տրվել: Դա պարզապես եղել է Շպենգլերի կողմից բացահայտված բնական օրենքը», տես՝ **նույն տեղում**:

թողի արժեքային վերլուծությունն Ա. Թոյնբիին բերում է այն հետևության, որ նրանում առաջնային համարվող «հոգևոր զարգացման տարրերությունները» անհնար է պատմականորեն արդարացնել այն պարզ պատճառով, որ քաղաքակրթության հիմնադիր-հայրերից և ոչ մեկի մոտ չենք հանդիպում «բոլոր հայտնի ռասաների ներկայացուցիչներից»: Ենիւ է, գրում է նա, «սև ռասան դեռևս միակն է, որը պատմական տվյալ պահին եւական ներդրում չունի զարգացման գործում», բայց, հիմք ընդունելով «քաղաքակրթական պատմական փուլի կարճատևությունը», պնդում է նաև, որ այդ փաստը ոչ մի պարագայում «չի կարելի որակել որպես այդ ռասայի անընդունակության անվիճելի փաստ»: Դա պարզապես վկայում է միայն տվյալ միջավայրում քաղաքակրթության ձևակազմության և գործառնության համար անհրաժեշտ պայմանների կամ խթանների բացակայության փաստը: Տեսաբանի կողմից մերժողական նոտեցում է դրսկորդում նաև աշխարհագրական պատճառականության մեթոդաբանության նկատմամբ: Զննարկվող համատեքստում Ա. Թոյնբին ամենակին չի մերժում շրջակա միջավայրի դերը: Ավելին, նա վիճարկելի չի համարում նաև, որ շրջակա միջավայրը, մասնավորապես «Նեղոսի ներքին հոսանքի հովիտները և Տիգրիսի ու Եփրատի ներքին հոսանքների ֆիզիկական պայմաններն են դարձել եգիպտական և շումերական քաղաքակրթության օրորանը»: Սակայն նա համոզված է նաև, որ դա ամենակին էլ չի կարելի համարել «ընդհանրական օրինաչափություն»: Այդ տեսակետը վերլուծաբանը հիմնավորում է հետևյալ առարկությամբ. Եթե ֆիզիկական պայմաններն իրապես տվյալ քաղաքակրթությունների վճռական նախապատճառն են, ապա ինչո՞ւ գուգահեռ քաղաքակրթություններ չեն ձևավորվել Դիրդանանի և Ոիհ Գրանդեի նույնատիպ ֆիզիկական հովիտներում: Եվ ինչո՞ւ հասարակածային Անդերի բարձրլեռնային հարբության վրա ծագած քաղաքակրթությունն իր երկվորյակը չունի Քենիայի սարահարթում<sup>4</sup>:

Հասարակական առաջնորդացի և զարգացման վերլուծությանը միտված այդ մեթոդների մերժումն Ա. Թոյնբին համարում է միայն հիմնահարցի լուծնան առաջին քայլը: Այդ մերժումը, նրա համոզմամբ, պարզապես հարկադրում է որոնել զննարկվող գործընթացների էությունը բնութագրող «օրյեկտիվ մեթոդները»: Եվ այդ համոզման վրա կառուցվում է տեսաբանի այն վստահությունը, որ հասարակության պատմական զարգացման գործընթացները պետք է իմաստավորվեն ոչ թե նյութատեսական և հասարակական-քաղաքական, այլ բացառապես քաղաքակրթական գործոններով: Ընդ որում, նա միաժամանակ համոզված պնդում է նաև, որ անաշառ գիտական բացատրությունների որոնումները ցանկացած հետազոտողի պետք է բերեն այն համոզման, որ արդեն իսկ պատմության գիրկն անցած քաղաքակրթությունների ուսումնասիրությունն» ամենակին էլ թույլ չի տալիս կազմել դրանց բախտագուշակը: Այդ քաղաքակրթությունների մահը հարաբերական է, եգրակացնում է Ա. Թոյնբին և հենցելով այս հարցում անառարկելի հեղինակության՝ Օ. Շպենգլերի տեսության վրա պնդում է, թե այս պարագայում ևս առնչվում ենք «փոխադարձության և շրջապտույտի ամենազոր ազդեցության» հետ: Նույնի է նաև Շպենգլերի ընդհանրացնող տեսակետը, հավատում է անգլիացի վերլուծաբանը, քանի որ նրա հայեցակարգի համաձայն չկա և չի կարող որևէ պատճառ լինել, որը «... խթանող մարտահրավերների շարքը

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 25:

չլրացնի հաղթական պատասխանների հետևողական շարքով ad infinitum (մինչև անվերջություն): Մյուս կողմից, եթե մենք իրականացնենք նահացած քաղաքակրթությունների բեկումից միչև անկում անցած ուղիների համեմատական էնախորիկ վերլուծությունը, ապա, ինչպես Շահնգերը, **իրականում կտեսնենք միայն միատեսակության որոշակի աստիճան**: Եվ դա, վերջին հաշվով, այնքան էլ զարմանալի չէ, քանի որ բեկումը ենթադրում է վերահսկողության կորուստ: Վերջինս, իր հերթին, նշանակում է ազատության փոխակերպում ավանտուրայի, և եթե ազատ ակտերն անվերջ բազմազան են և բացարձակ կանխատեսելի, ապա ավտոմատիկ գործընթացները **միատեսակության և կրկնականության միտում ունեն** (ընդգծումները մերն են՝ Ա. Ք.):»<sup>5</sup>:

Եվ մեթոդաբանական այդ ելակետերի ընդհանրացմանը Ա. Թոյնբին հանգում է այն հիմնարար հայեցակարգային եզրակացությանը, թե վերը նշված գործնթացներից դուրս ընկած հասարակական առաջընթացի և զարգացման նախն որևէ այլ քիչ թե շատ ամբողջական տեսություն հակասական է, թերի, ոչ ամբողջական, որովհետև դրանցում «Երկրորդ պլան է մղվում առաջնայինը»: Այդ իսկ պատճառով նա անվերապահ անդում է, որ «**Պատմության վերաբերյալ ներկայիս արևմտյան մոտեցումը ժայրաստիճան հակասական է**: Եթե տարածության և ժամանակի մեջ մեր պատմական հորիզոնը զգալիորեն ընդլայնվել է, ապա մեր պատմական մտապատկերը, այն ինչ մենք փաստացի տեսնում ենք ի հակադրություն նրա, ինչը կարող էնք տեսնել ցանկության դեպքում, արագորեն նեղանում է սանձահարված ձիու կամ սուզանափի շրջադիտակի աստիճանի (ընդգծումը մերն է՝ Ա. Ք.):»<sup>6</sup>: Այդ հիման վրա Ա. Թոյնբին ընդհանրացնելով անդում է, որ հասարակությունների անկումը «քաղաքակրթությունների շրջապատճետություն» շպենգերական հայեցակարգով բացատրելու պարագայում օբյեկտիվորեն դրսնորպում են հիմնահարցը լուսաբանող և երկու կարևորագույն օրինաչափություններ: Նաև այն, որ միանգամայն ակնհայտ է դառնում, թե «քաղաքակրթությունների հարաբերության» հիմքում ընկած արժեքների կրկնողությունը (փոխառությունը) և շրջունությունը (ցիկլային բնույթը) առաջնային են և երկրորդ, որ ցանկացած քաղաքակրթությանն առաջադրվող «մարտահարավերները» և դրանց հակադարձվող «պատասխանները» գտնվում են դիմամիկ փոխարաբերության մեջ: Ա. Թոյնբին վստահ է, որ նշված օրինաչափությունները միաժամանակ թույլ են տալիս բացահայտել «քաղաքակրթական արժեքների հարատևությունն ու փոխադարձ անցման մեխանիզմները»: Բայց զգուշացնում է նաև, որ այդ դիրքերից հիմնահարցի «մակերեսային քննության» դեպքում կարելի է ակամա հանգել տեսական կամ մտային հակասությունների: Այդ իսկ պատճառով նա իր պարտըն է համարում զգուշացնել: «Եթե մենք քաղաքակրթության կործանումն այդ ճանապարհով այլ քաղաքակրթության ծնունդ է առաջ բերում, ապա այնպես չի՝ ստացվում արդյոք, որ մարդկությանը հուզող գլխավոր ձգտումների որոնումները վերջին հաշվով հանգեցվում են տրտում ներկերանոսության անպտուղ շրջապատճետի: Հասարակության վերաբերյալ ննանատիպ ցիկլային հայացքները ընդունվել են անգամ Հունաստանի և Հնդկաստանի լավա-

<sup>5</sup> Նոյմ տեղում, էջ 26:

<sup>6</sup> Նոյմ տեղում, էջ 97:

գույն մտքերի կողմից, ինչպիսիք են, ասենք, Արիստոտելն ու Բուդդան և նրանց մտքով անգամ չի անցել մտածել ապացուցնան անհրաժեշտության մասին: ... Մեր արևմտյան մտածողության համար ցիկլային տեսությունը, եթե այն լրջորեն ընդունվի, պատմությունը կարող է հանգեցնել ապուշի կողմից պատմվող անհմաստ հեքիաթի»<sup>7</sup>:

Վերոնշյալ երևոյթը Ա. Թոյնբին բացատրում է «գործընթացային իրավիճակի մակերեսային ճանաչողությանը», նրանով, որ ճանաչող միտքը չի կարողանում տեսնել «առաջին հայացքից անտես» և «խորքում ընկած» ծշմարտությունները: Երևոյթը նա պարզաբանում է նաև «քայլայվող և անկում ապրող» հասարակարգերի օրինակով: Պատմական փորձի վերլուծությանը նա ձգտում է հիմնավորել, թե «հասարակության քայլայման և դեգրադացիայի» ամեն մի նորմալ մոդել ըստ էռության պատկերում է «քայլայվող հասարակության պառակտում դեպի անհնազանդ ու բունտար սուբստրատ և ավելի ու ավելի ազդեցիկ կառավարող փոքրանասնություն, շատ անգամ՝ ամբողջատիրության տեսքով»<sup>8</sup>: Եվ քանի որ հասարակությունը գործառնող ամբողջություն է, գրում է նա, ապա նշված «Անկման գործընթացը հավասարաչափ չի ընթանում. այն թոհջըներով շարժվում է խռովությունից դեպի միավորում և դարձյալ դեպի խռովություն: Նախավերջին միավորման փուլում համապարփակ պետություն ստեղծելու միջոցով կառավարող փոքրանասնությանը հաջողվում է ժամանակավորապես կանգնեցնել հասարակության ճակատագրական կործանումը»<sup>9</sup>:

Մտքի և տեսության ոլորտին բնորոշ այդ հակասություններին գուգընթաց վերլուծաբանը մատնանշում է նաև հասարակական կյանքից բխող «օբյեկտիվ այլ հակասություններ ևս» և պնդում, որ դրանք «... լոկ բազմաթիվ հակասություններից են, որոնք հավանաբար բնութագրում են այն ժամանակները, որի ընթացքում մենք ապրում ենք»<sup>10</sup>: Ա. Թոյնբիի հայացքը կանգ է առնում նաև դարաշրջանը բնութագրող այլ հակասությունների վրա: Այդ կապակցությանը նա գրում է, որ մերօրյա հասարակական կյանքում ամենակին էլ դժվար չէ մատնանշել հակասական այնպիսի օրինակներ, որոնք մարդկանց աչքում «սպառնալի տեսք են ստանում»: Որպես հիմնավորում նա մի կողմից մատնանշում է անախաղեա զարգացած արտադրողական հզորությունների ծևավորումը, իսկ մյուս կողմից՝ անախաղեա ունեցրկման ու արժեզրկման առկայությունը, մի կողմից՝ արտադրության տեխնոլոգիական միջոցների ներդրումը, գործազրկության աճը, իսկ մյուս կողմից՝ աշխատուժի պակասը: Եվ նմանապիա բազում հակա-

<sup>7</sup> Նոյն տեղում, էջ 27:

<sup>8</sup> Տես նոյն տեղում, էջ 26:

<sup>9</sup> Նոյն տեղում: Վերլուծաբանը համոզված պնդում է, որ «անկման շրջանի հարաբերականորեն կայուն» գործընթացների հիման վրա «կառավարող փոքրանասնության» գործունեության արդյունքում «գոյավորվող նոր քաղաքակրթության» ակնհայտ օրինակներից մեկն էլ այն է, որ «Դամապարփակ պետության շրջանակներում կառավարող փոքրանասնության իշխանության ներք պրուետարիատը Տիեզերական եկեղեցի է ստեղծում: Եվ հերթական ու վերջին խռովության ընթացքում, երբ իր ավարտին է հասնում դեզինտեգրացիան, այդ եկեղեցին ի զրոյու է պահպանվել և դառնալ այն տիկնիկը, որից որոշ ժամանակ անց նոր քաղաքակրթություն է ծևավորվում», նոյն տեղում:

<sup>10</sup> Նոյն տեղում, էջ 97:

սությունների վերլուծության հիման վրա տեսաբանն ընդհանրացնելով պնդում է, որ Արևմուտքն, իրոք, «... բարձրացել է մարդասիրական գաղափարի աննախադեպ բարձր մակարդակի: Մենք ճանաչում ենք ցանկացած դասակարգի մարդու, ազգի, ռասայի հասարակական իրավունքները և միաժամանակ մենք ընկղղվել ենք դասակարգային պայքարի, նացիոնալիզմի և ռասիզմի խորխորատը: Այդ ստոր կրքերը ելք են գտնում սահմարյուն, պլանավորված դաժանություններում. և հոգու ու վարքագծի նորմերի անհամատեղելի այդ երկու իրավիճակները այսօր կարելի է հանդիպել կողք կողքի ընթանալիս ոչ միայն աշխարհում, այլև միևնույն երկրում և անգամ՝ միևնույն հոգում»<sup>11</sup>:

Կստոհ այն բանում, որ վերոնշյալ օրինակներն ամենակին էլ անհրաժեշտ և բավարար պայման չեն հասարակական առաջընթացի և զարգացման գործուն արտաքին (տնտեսական և քաղաքական) գործոնների դերը հիմնավոր մերժելու համար, Ա. Թոյնբին վերլուծական շեշտը տեղափոխում է դեպի «պատմության դատի առջև կանգնած քաղաքակրթությունների ուսումնասիրություն», հավասարապես նաև՝ «քաղաքակրթական տարածության» հարցերի արժեսրուն: Դանդես գալով արևմտյան քաղաքափառական մտքին բնորոշ համակարգային մոտեցման դիրքերից, Ա. Թոյնբիի աշխարհայացքին խորթ է նեղ էնպիրիզմը: Այդ իսկ պատճառով նա առաջնահերթություն է համարում «քաղաքակրթությունների պատմությունն ուսումնասիրել իր բնականոն ընթացքի մեջ», հաշվի առնելով դրանց գոյավորունը, գործառնությունն ու անկունը պայմանավորող գործոնների համախմբերը: Այդ դիրքերից անդրադառնալով քաղաքակրթության «դարաշրջանային իրադարձության» վերլուծությանը, նա համոզված պնդում է. «Տարածական չափման մեջ դուք չեք կարող հասկանալ երկրի պատմությունը, նրա ուրվագիծը կտրելով աշխարհի քարտեզից և մի կողմ նետելով այն ամենը, ինչը սկիզբ է առել այդ երկրի կոնկրետ սահմաններից դուրս»<sup>12</sup>: Վերլուծական այդ մոտեցունը Ա. Թոյնբին փորձում է փաստել «Արևմտյան քրիստոնեություն»<sup>13</sup> հասկացության մեկնաբանությանը: Նա համոզված է, որ Արևմտյան ցանկացած երկրի պատմությունը, հավասարապես նաև «Արևմտյան քաղաքակրթությունը» օրյեկտիվորեն անհնար է ուսումնասիրել առանց «հաշվարկի նվազագույն այդ միավորի», քանի որ վերջինս իր համընդգրկուն է ությամբ առավել կիրառելի է Արևմուտքի պատմական ուսումնասիրության համար, քան առանձին վերցրած որևէ այլ երկրի պատմությունը: Եվ չնայած այն բանին, գրում է նա, որ իբրև քաղաքակրթական արժեք Արևմուտքի համար ընդհանրական և բնութագրիչ է հենց «Արևմտյան քրիստոնեությունը», այդուհանդերձ, քաղաքական տարածությունը բնութագրելու տեսանկյունից այդ հասկացությունը ևս «քավականին նեղ է»: Իսկ դա, իր հերթին, թելադրում է հետազոտության համար որոնել «հաշվարկի նվազագույն այլ միավոր»: Եվ քանի որ «Արևմտյան քրիստոնեություն» ածանցյալ է

<sup>11</sup> Նույն տեղում:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 98:

<sup>13</sup> Հեղինակը պարզաբանում է, որ «Արևմտյան քրիստոնեություն» հասկացության «հաշվարկի նվազագույն միավոր» ասելով պետք է հասկանալ «հոռմեակարգութիկական և բողոքական աշխարհը», այլ կերպ ասած՝ «Պապական աթոռի հետևորդներին կամ Հռոմեական Եպիսկոպոսության կողմնակիցներին», ինչպես նաև «հետազոտության համար որոնել «հաշվարկի նվազագույն այլ միավոր»:

«քրիստոնեության» նկատմամբ, գրում է Ա. Թոյնբին, ավելի քան ակնհայտ է նաև, որ «... Արևմտյան քրիստոնեության պատմությունն անհնար է ընկալել միայն իր աշխարհագրական սահմաններում»<sup>14</sup>:

Այդ ամենի հիման վրա անգլիացի տեսաբանը «պատմության դատին ներկայացվող քաղաքակրթության» ուսումնասիրության քազմագործոն և համակարգված մոտեցումը հիմնավորելու միտումով մեծապես կարևորում է նաև «հաշվարկի նվազագույն այնպիսի միավորի» դերը, ինչպիսին Արևմտյան քաղաքակրթության ծևավորման հիմքում ընկած մեկ այլ «տարածական միավորն» է՝ քրիստոնեական քաղաքակրթությունը: Եվ քանի որ վերջինիս գոյակազմությունն իրականացել է միանգամայն այլ «քաղաքակրթական տարածքում», «տարածական գործոնի» առաջնության և հասարակության ցիկլային զարգացման տեսությունը հիմնավորելու միտումով Ա. Թոյնբին վկայում է, որ «Արևմտյան քաղաքակրթության արեալը կազմում է միայն Երկրագնդի բնակելի հատվածի մի փոքրիկ մասսը»: Եվ պետք է նկատել, որ պատմականության դիրքերից կառուցված այս հայեցակարգում մերժվում է Եվրոպական քաղաքակրթության քացառիկության «Եվրակենտրոնությունը» հիմնավորելու ժայրահետ տեսակետը: Այդ պնդման հիմնավորումներից մեկն էլ պետք է համարել վերլուծաբանի հետևյալ տողերը. «Արևմտյան քրիստոնեությունը այսօր աշխարհում պահպանված հինգ քաղաքակրթություններից լոկ մեկն է. ... թեև այդ քաղաքակրթություններն էլ մոտավորապես քսան քաղաքակրթություններից ընդամենը հինգն են, որոնք առաջ են եկել շուրջ վեց հազար տարի առաջ»<sup>15</sup>:

Այդ համատեքստում հատկանշական է բնութագրական մեկ այլ փաստ ևս: Այս պարագայում Ա. Թոյնբին փորձ է կատարում պատկերել միակողմանիությունից գերծ պատմականության այնպիսի ուրվագիծ, որի համակարգում «քանակական համեմատականները» դարնում են արտաքին և նկարագրական: Այս թե ինչու անդրադառնալով գործառնող «հինգ քաղաքակրթությունների» համեմատական վերլուծությանը, տեսաբանը ելակետ է ընտրում «համեմատական ուսումնասիրության քազմագործոն սկզբունքը», որի շրջանակներում վերլուծական կարևորագույն տարրից առաջինը համարում է քաղաքակրթությունների հարատևման այնպիսի ազդեցիկ գործոն, ինչպիսին «կայունություն» է: Այդ հիման վրա նա հանգում է ընդհանրացնող այն հետևողաբար առաջարկությունը, որ քաղաքակրթությունների կենսունակության հիմնահարցը չպետք է շաղկապել որևէ կոնկրետ գործոնի հետ, քանի որ ամեն մի քաղաքակրթություն ծնավորվում և գործառնում է բազմագործոն հիմքերի առկայության դեպքում միայն: Կարևորագույն այդ տարրերի շարքում նա մատնանշում է նաև «տարածական գործոնը», որը, սակայն, վճռական չի համարում: Վերլուծաբանը դա բացատրում է հետևյալ

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 99: Դետաքրքրական է նաև քաղաքակրթությունների տարածական շփման «ուժային տարրերակի» վերաբերյալ Ա. Թոյնբին տեսակետը: Մասնավորապես անդրադառնալով այն փաստին, որ խաչակրաց արշավանքներով «Արևմտյան քրիստոնյաները միայն մեկ անգամ փորձ կատարեցին Պաղեստինում մուսուլմաններից խլելու մեր կրոնի օրորանը», Ա. Թոյնբին միաժամանակ հավաստում է նաև, որ եթե այդ փորձը հաջողությամբ պատճենված պատճենագործությունը կարևորագույն Ասիական մայրաքանչ կատարելու հաջողությամբ կրոնական պատճենագործությունը կատարելու հաջողությամբ:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 99:

կերպ. «... եթե մայրցամաքը, որի տակ ես հասկանում եմ ողջ ցամաքային Ասիան, քաղաքակրթական հենքի կայունության համար կարելի է համարել քաղաքակրթական կյանքի հավանական շարունակության մոտավոր ցուցիչ, ապա ներկայումս գոյություն ունեցող մյուս քաղաքակրթություններն ավելի «կենսունակ են», ... քան մեր սեփական քաղաքակրթությունը»<sup>16</sup>:

Նա միաժամանակ զգուշացնում է նաև, որ այս հարցում պետք է գերծ մնալ գոյություն ունեցող քաղաքակրթություններից որևէ մեկի պատմական դերը գերազանահատելու փորձից՝ այն հիմնա վրա, թե նրանց գոյությունն ու «տարածական շարունակական» բնույթը արդեն իսկ կենսունակության անառարկելի ցուցիչ է: Այդ պատճառով քաղաքակրթությունների փոխհարաբերության և գոյակցության սկզբունքը փաստելու միտունով նա առաջարկում է քաղաքակրթությունների եռթյունը բնութագրել ոչ թե ժամանակային «շարունակական», այլ քաղաքակրթական «նվաճում» (ներդրում կամ փոխառում) հասկացությամբ, քանի որ վստահ է, թե այդ պարագայում «... հարաբերական նվաճումների օրինակելի ցուցիչ կարելի է համարել այն, թե տվյալ քաղաքակրթությունը մարդկությանը լույս և ջերմություն տված ինչ քանակի անհատականություններ է լույս աշխարհ բերել»<sup>17</sup>:

Վերլուծելով քաղաքակրթությունների հարաբերության հարցը, Ա. Թոյնբին առաջին հերթին անդադառնում է այդ գործընթացի պատճառների քննական արժևորմանը: Նա հավաստում է, որ «Բոլոր հինգ կենսունակ քաղաքակրթությունները դրանցից երկուսի կողմից ձեռնարկված նախաձեռնության արդյունքում վերջին 400 տարիների ընթացքում հարաբերվում են մեկը մյուսի հետ»<sup>18</sup>: Անդրադառնալով «նախաձեռնող գործոնների» գործառնական դերի վերլուծությանը, տեսաբանն առաջին հերթին առանձնացնում է «Արևմտան քրիստոնեության» և «Ուղղափառ քրիստոնեության» էքսպանսիաները: Վերջիններիս համեմատական ուսումնասիրությունը Ա. Թոյնբիին բերել է այն համոզման, որ «Արևմտյան քրիստոնեության էքսպանսիան» աչքի է ընկնում բնորոշ երկու գծերով: «... լինելով անդրօվկիանոսային, դա այսօր ևս հանաշխարհային միակ էքսպանսիան է այն ինաստով, որ իր ոլորտ է ներառել երկրագնդի բնակեցված

<sup>16</sup> **Նույն տեղում:** Յարկ ենք համարում մատնանշել նաև, որ այս պարագայում հեղինակը նկատի ունի «ազգակից արևմտյան և ուղղափառ քաղաքակրթությունները», «արյունակից իսլամական քաղաքակրթությունը», ինչպես նաև ազդեցիկ «հիմնութառական և Հեռավորակեցան (չինական) քաղաքակրթությունները», մանրամասները տեսն նույն տեղում, էջ 99-101:

<sup>17</sup> **Նույն տեղում,** էջ 100: Անդրադառնալով այն հարցին, թե քաղաքակրթական դաշտում ովեր են «ներկային մարդկության գեներացիայի» կարևորագույն «բարեգործները», Ա. Թոյնբիին գորում է: «Ես կնշեմ այնպիսիներին, ինչպիսիք են Կոնֆուցիուսը և Լաո-Ցզին, Բուդդան, Խսրայելի և Չուդայի Մարգարեները, Զրադաշտը, Յիսուսը և Սուլիամենը, Սոկրատեսը: Եվ բոլոր ժամանակների համար մարդկության այդ բարեգործներից և ոչ մեկը չի պատկանում գոյություն ունեցող քաղաքակրթություններից որևէ մեկին: Կոնֆուցիուսը և Լաո-Ցզին ծնվել են վաղ սերնդի հեռավորակեցան անհետացած քաղաքակրթությունից, Բուդդան վաղ փուլի հնդկական մարած քաղաքակրթության զավակն է, ... Զրադաշտը, Յիսուսը և Սուլիամենը ծնվել են անհետացած ասորական քաղաքակրթությունից, Սոկրատեսը մահացած հունական քաղաքակրթության զավակն է», նույն տեղում:

<sup>18</sup> **Նույն տեղում:**

ողջ տարածքը. և ժամանակակից տեխնիկական միջոցների օգնությամբ «տարածությունը և ժամանակը նվաճելու» շնորհիվ Արևմտյան քաղաքակրթության նյութական նվաճումների տարածումը ինչպես երբէւ մերձեցրել են երկրագնդի տարբեր հատվածները: Բայց այդ ամենով Արևմտյան քաղաքակրթության էքսպանսիան ռուս Ուղղափառության էքսպանսիայից, հավասարապես նաև՝ նախորդ շրջանների այլ քաղաքակրթությունների էքսպանսիայից տարբերվում է միայն քանակապես, բայց ոչ որակապես»<sup>19</sup>:

Վերլուծաբանն այդ պնդումը բացատրում է հետևյալ կերպ. անցյալում ևս գոյություն են ունեցել բավականին ազդեցիկ քաղաքակրթություններ, ինչպիսիք են, օրինակ, փյունիկյան, ասորական, հիւնական քաղաքակրթությունները, որոնք անուրանալի ավանդ են ներդրել արդի մարդկության միասնականացման, այդ ժամանակարիով նաև՝ հասարակության պատմության միասնականացման գործում: Նա միանգամայն համոզված պնդում է նաև, որ այդ ժամանակարիով ընթանալով ողջ աշխարհը վերածվել է «մեկ հսկայական հասարակության»: Եվ ինչը բնորոշ է արևմտյան տեսական մտքին, Ա. Թոյներին ևս հավաստում է, թե այդ ժամանակարիով շարժվող քաղաքակրթությունների բարձրագույն և ավարտական փուլն էլ հանդիսանում է ժամանակակից «արևմտյան քաղաքակրթական ունիվերսալիզմը և էքսպանսիան»: Բայց ծայրահեղություններից գգուշացնելով նաև պնդում է, թե «Մենք պետք է նկատի ունենանք, որ առաջին՝ այդ էքսպանսիան ընդամենը իր ավարտին է հասցրել աշխարհի միասնականացումը, այսինքն՝ հանդիսանում է ընդհանուր գործընթացի ավարտական փուլը, և երկրորդ, որ թեև աշխարհի միասնականացումը իրականացվել է Արևմուտքի ջանքերով, ներկայիս արևմտյան պետությունները, ինչը միանգամայն ակնհայտ է, երկար գոյատևել չեն կարող»<sup>20</sup>: Այդ եզրակացությունը ձգտելով հիմնավորել հասարակության զարգացման «քաղաքակրթությունների ցիկլայնության» շաբենգլերական հայեցակարգի դիրքերից, ապագայարանական մոտեցմանը վերլուծաբանը հավաստում է. «մերօրյա միասնական աշխարհում առկա են ոչ արևմտյան ծագման տասնութ քաղաքակրթություններ, որոնից չորսը կենդանի են, իսկ տասնչորսը՝ մահացած: Դրանք, անկասկած, դեռևս իրենց զգացնել կտան, քանի որ «... այն չափով, որ չափով որ միավորված աշխարհը նոր դարերի ու սերունդների միջոցով աստիճանաբար ճանապարհ կգտնի մշակույթների հավասարակշռման ճանապարհին, ժամանակի ընթացքում արևմտյան քաղադրիչը ևս կգրավի այն համեստ տեղը, որին իր իրական արժեքայնությամբ այն կարող է հավակնել կենդանի և մահացած այն մշակույթների հետ համեմատած, որոնց արևմտյան էքսպանսիան ինքն է շփման մեջ դրել մինյանց և իր հետ»<sup>21</sup>:

Այդ տեսանկյունով դիտարկվող պատմությունը, գրում է նա, անկասկած «մարտահրավեր կնետի հաջորդ սերնդի պատմաբաններին»: Եվ եթե մեր ուժեղին համապատասխան մտադիր ենք իրագործել այն ամենը, ինչը կարող էնք և դրանով ցանկանում ենք ծառայություն մատուցել ապագային, ապա առաջին հերթին պետք է գործնական քայլեր կատարենք հաղթահարելու համար «մեր

<sup>19</sup> Նույն տեղում:

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 101:

<sup>21</sup> Նույն տեղում:

Երկրներին և մշակույթներին խորթ լոկալ ու անցողիկ խավարը» և այդ հիման վրա պետք է ձգտենք առավելագույնս մերձենալ պատմության համար ընդհանրական արժեք ներկայացնող «սինոպտիկական հայացքին»: Իսկ այդ ամենի իրագործման համար առաջնահերթ և օբյեկտիվ անհրաժեշտություն է իրեւ մեկ ամբողջություն մարդկությանը մատուցել ինչպես անցյալի, այնպես էլ ներկայի կենսունակ քաղաքակրթությունների պատմությունը: Ահա թե ինչո՞ւ Ա. Թոյնբիի համոզմանք այդ ամենին հնարավոր է հասնել Երկու՝ քաղաքակրթությունների համակարգային համեմատական, ինչպես նաև՝ վերջիններիս հնարավոր բախումներն ուսումնասիրելու ճանապարհով:

Վերլուծաբանը համոզված է, որ քաղաքակրթությունների «համակարգային համեմատական» ուսումնասիրությունը պետք է կարևորել ոչ միայն պատմական տեսանկյունից, իիմք համարելով, որ օբյեկտիվ մոտեցման դեպքում այդ ճանապարհը կարող է տանել «քաղաքակրթությունների յուրատիպ հանդիպման»: Վերլուծական այդ ճանապարհի «իրական արժեքը» հեղինակն ամենից առաջ գնահատում է այն կապակցությամբ, թե «Քաղաքակրթությունների հանդիպումները պատմականորեն ուսուցողական են ոչ միայն այն պատճառով, որ միասնական ֆոկուսի մերք են հավաքում մի քանի քաղաքակրթություններ, այլև այն պատճառով, որ այդ հանդիպումներից և բախումներից են ծնվում բարձրագույն կրոնները ...»<sup>22</sup>: Ինչ վերաբերում է քաղաքակրթությունների բախման թոյնբիական մեկնաբանությանը, փաստական նյութի վերլուծությունը թույլ է տալիս հավաստել, որ նրա կողմից այդ գործընթացը դիտարկվում է քաղաքակրթությունների համակարգային-համեմատական ուսումնասիրության համատեքստում: Նրա կողմից վերլուծական այդ ճանապարհի կարևորությունը բնութագրվում է նաև այն տեսանկյունից, թե այդ փոխազդեցության մեջ միայն կարելի է համակարգված կերպով իրականացնել «քաղաքակրթություններից յուրաքանչյուրի անհատականության» ուսումնասիրությունը: Ըստ Ա. Թոյնբիի՝ այդ պարագայում քաղաքակրթությունները կարող են դիտարկվել նաև որպես «հասարակության որոշակի տիպը բնութագրող ներկայացուցչական որակներ»: Այդ ամենն էլ վերլուծաբանին բերում է այն հետևողանը, որ «Եթե մենք ուրվագծում ենք քաղաքակրթությունների պատմությունը, մենք կարող ենք համեմատել փուլից փուլ անցնան նրանց փորձը. այդ մեթոդով գործելով մենք, հավանական է, կարող ենք նրանց եզակի պահերից վեր կանգնելով դրանց պատմության ընդհանուր պահե-

<sup>22</sup> **Նոյն տեղում**, էջ 101: Ա. Թոյնբին բարձրագույն կրոնների շարքում է դասում «Աստվածամոր և նրա չարչարվող, մեռնող և հարություն առնող Որդու (հավանական է շումերական ծագման) պաշտամունքը, հուդայականությունը և զրադաշտությունը, որոնք ձևավորվել են ասորական և բարելական քաղաքակրթությունների հանգուցակետում, քրիստոնեությունը և իսլամը, որոնք ծագել են ասորական և հունական քաղաքակրթությունների հանգուցակետում, իինդուկզմը և բրուդրայականության Մահայանա տարատեսակը, որոնք ձևավորվել են հնդկական և հունական քաղաքակրթությունների բախումից»: Եվ այդ ամենի ընդհանրացմանը հավելում է. «Ես գտնում եմ, որ մարդկության պապան, եթե նա այդպիսի միտվածություն ունի, կախված է վերջին չորս հազարամյակներում ծագած (առաջինից բացի մյուս բոլոր գործնականում ծագել են վերջին երեք հազարամյակներում) բարձրագույն այդ կրոններից, այլ ոչ թե քաղաքակրթություններից, որոնց հանդիպումն է կյանք տվել բարձրագույն այդ կրոններին», տես **Նոյն տեղում**, էջ 101-102:

Ի դեպքում այնպիսի յուրահատուկ գծեր, որոնք նաև անհատական բնութագրեր են ներկայացնում: Այդ ճանապարհով մենք կարող ենք մշակել նաև քաղաքակրթված համարվող հասարակության տիպերի կազմաբանությունը»<sup>23</sup>:

## **А. ДЖ. ТОЙНБИ ОБ ОБЩЕСТВЕННОМ ПРОГРЕССЕ И МЕЖЦИВИЛИЗАЦИОННЫХ ОТНОШЕНИЯХ**

**A. A. KALASHYAN**

В статье на основе анализа фактического материала показывается, что А. Дж. Тойнби под влиянием О. Шпенглера отрицает существование единого процесса общественно-исторического развития. Пытаясь вывести "эмпирические законы" общественного развития, теоретик этот процесс представляет в форме круговорота "свообразных и локальных цивилизаций". Согласно А. Дж. Тойнби движущей силой "цивилизационного развития" является "жизненный порыв", носитель которого - "творческое меньшинство", которое определяет специфику каждой цивилизации, иерархию социальных ценностей и концепцию смысла жизни. А. Дж. Тойнби пытается обосновывать также, что основой поступательного развития общества является "прогресс духовного совершенствования".

Автором показывается также, что концепция "цивилизационного развития" А. Дж. Тойнби - своеобразная альтернатива "евроцентризму".

## **J. TOYNBEE ABOUT PUBLIC PROGRESS AND INTER-CIVILIZATIONAL RELATIONS**

**A. A. KALASHYAN**

In this article, on the basis of the analysis of an actual material, the author shows that A. J. Toynbee denies the existence of common process of socio-historical development under the influence of O. Spengler. Trying to deduce the "empirical laws" social development, the scholar represents this process in the form of circulation of "specific and local civilisations". According to A. J. Toynbee a motivation for "civilisational developments" is "a vital impulse", which is carried by "creative minority" which defines specificity of each civilisation, hierarchy of social values and the concept of meaning of the life. A. J. Toynbee tries to prove also that a basis for development of a society is the "progress of spiritual perfection".

The author shows also that the concept "civilisational development" of A. J. Toynbee is a specific alternative for "Eurocentrism".

---

<sup>23</sup> Առյ տեղում, էջ 102: